Սերգեյ Դովլաթով

Կոմպրոմիսներ

Ն. Ս. Դովլաթովային՝ պատճառածս ողջ տանջանքի համար

…Ու մնացի անգործ: Գուցե դերձակությո՞ւն սովորեմ: Նկատել եմ՝ դերձակները միշտ լավ տրամադրություն են ունենում…

Հանդիպեցի հեռուստատեսության Լոգինովին:

Ողջույն: Ի՞նչ կա:

Աշխատանք եմ փնտրում:

Ազատ տեղ կա: «Հայրենիքի պաշտպանության դիրքերում» թերթում: Ազգանունը գրիր՝ Կաշիրին:

Քաչա՞լը:

Կաշիրինը փորձառու լրագրող է: Նուրբ ու փափուկ մարդ է:

Քաքն էլ է, ասացի, փափուկ:

Ճանաչո՞ւմ ես:

Չէ:

Ուրեմն ազգանունը գրիր:

Գրեցի:

Կարգին հագնվիր: Կինս ասում է,որ եթե դու կարգին հագնվես…

Իմիջայլոց, մի օր նրա կինն ինձ զանգեց… Ո՛չ: Կբացվի ծավալուն ու հրապուրիչ նոր նյութ: Անդառնալիորեն կշեղի բուն նյութից…

Փող աշխատեմ՝ կհագնվեմ: Ցիլինդր կառնեմ…

Տանը հանեցի լրագրային հրապարակումներս: Ընտրեցի առավել հարմարները: Կաշիրինը դուրս չեկավ: Խամրած դեմք, բանակային հումոր: Մի պահ ինձ նայելուց հետո, ասաց .

Իհարկե անկուսակցական եք:

Գլխի մեղավոր շարժումով հաստատեցի: Ինչ-որ ապուշ բարեհոգությամբ ավելացրեց .

— Մի քսան հավակնորդ է եղել: Գալիս, զրուցում են… ու անհետանում: Գոնե հեռախոսի համար թողեք:

Ասացի հիշողությանս մեջ պատահաբար մնացած քիմմաքրման հեռախոսի համարը:

Տանը կրկին նայեցի լրագրային հրապարակումներս: Որոշ բաներ վերընթերցեցի: Մտքերի մեջ ընկա…

Դեղնած թերթեր: Ստի ու կեղծիքի տասը տարի: Ինչ-որ մարդիկ, այդուհանդերձ, կան այդ ամենի ետեւում, ինչ-որ խոսակցություններ, զգացմունքներ, իրականություն… Ոչ թե թերթերում, այլ դրանցից դուրս հորիզոնում…

Դժվարին է ճշմարտությունից դեպի իսկությունը տանող ուղին:

Նույն գետը երկու անգամ չես մտնի: Կարող ես, սակայն, հոսող ջրի տակ տեսնել պահածոյի տուփերով ծածկված հատակը: Իսկ պերճ թատերական դեկորացիաների ետեւում՝ աղյուսե պատը, պարանները, կրակմարիչն ու գինով

բանվորներին: Դա հայտնի է ամենքին, ով գեթ մեկ անգամ եղել է կուլիսներում…

Սկսենք կոպեկանոց լուրից: